



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. փետրվարին /վերլուծություն/

2008թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12772 գործարքներ, որոնց քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 31.6%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 38.2%-ով:

2008թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4506 օտարման գործարքների 83.8% կազմել են առուվաճառքները, 15.5%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.4%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.8% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. փետրվարին, 2008թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 18.1%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ՝ 9.2%-ով:

2008թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.6% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 39.3%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ նվազել՝ 9.3%-ով:

2008թ. փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2007թ.	փետրվար 2008թ.	հունվար 2008թ.
Կենտրոն	415200	476100	475100
Արաբկիր	324000	387800	379300
Քանաքեռ-Զեյթուն	231700	299200	298400
Նոր-Նորք	205700	259400	254400
Ավան	191100	262100	256200
Էրեբունի	204200	261500	260500
Շենգավիթ	215200	270700	270000
Դավթաշեն	227400	278300	277500
Աջափնյակ	204300	263100	260600
Մալաթիա-Մեքաստիա	193700	256000	255200
Նուբարաշեն	117600	146700	142900
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	230000	287400	284600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. հունվարի համեմատ աճել են 1.0%-ով:

2008թ. փետրվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 429 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. հունվարի համեմատ աճել է 14.4%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ նվազել՝ 8.5%-ով:

2008թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2007թ.	փետրվար 2008թ.	հունվար 2008թ.

Արագածոտն	Աշտարակ	90800	116500	112500
	Ապարան	28500	31100	31000
	Թալին	32400	40600	40500
Արարատ	Արտաշատ	71200	91400	91200
	Մասիս	80800	118700	116700
	Վեդի	53200	76700	74400
	Արարատ	52100	58700	58500
Արմավիր	Վաղարշապատ	112400	154800	149700
	Արմավիր	79100	114400	109600
	Մեծամոր	51100	72100	69500
Գեղարքունիք	Սևան	52100	79400	76800
	Գավառ	31600	42300	41100
	Մարտունի	46300	63900	61900
	Վարդենիս	25000	29400	29300
	Ճամբարակ	14200	15700	15600
Լոռի	Վանաձոր	64500	82200	81900
	Ստեփանավան	31900	44400	44300
	Սպիտակ	42300	59400	59000
	Այվերդի	23300	28000	27900
	Տաշիր	22600	29400	29000
	Թումանյան	5400	5500	5500
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11100	12700	12700
Կոտայք	Աբովյան	128200	158000	156900
	Նոր Հաճն	89100	114100	113900
	Բյուրեղավան	61500	88100	86500
	Եղվարդ	80000	106700	106300
	Հրազդան	44900	60000	59800
	Ծաղկաձոր	80600	136000	129400
	Զարենցավան	52400	79500	76200
Շիրակ	Գյումրի	60600	88100	87900
	Արթիկ	40900	53000	50600
	Մարալիկ	24100	26100	26000
Սյունիք	Գորիս	62400	93200	89100
	Կապան	57400	82600	79000
	Սիսիան	48300	65400	62600
	Մեղրի	35600	44200	44100
	Ագարակ	23000	28600	27700
	Քաջարան	29700	43100	41600
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	54000	69900	69700
	Եղեգնաձոր	63400	88900	88900
	Ջերմուկ	93600	123200	118000
Տավուշ	Դիլիջան	59200	82600	82200
	Իջևան	77000	114800	109600
	Բերդ	33000	37500	37400
	Նոյեմբերյան	26500	29800	29100
	Այրում	18000	21000	21000

2008թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. հունվարի համեմատ աճել են 2.2%-ով:

2008թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 490 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 106,

մյուս մարզերում միասին վերցրած՝ 384: 2008թ. հունվարի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 4.9%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 13.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 11.3%-ով: 2007թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 7.5%-ով, ընդ որում Երևանում՝ 47.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած մնացել է անփոփոխ:

2008թ. փետրվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2007թ.	փետրվար 2008թ.	հունվար 2008թ.
Կենտրոն	423800	486100	484100
Արաբկիր	337500	395300	391300
Քանաքեռ-Զեյթուն	235900	307700	305900
Նորք-Մարաշ	209500	266300	258600
Ավան	194500	267000	263200
Էրեբունի	207400	266600	263400
Շենգավիթ	218600	273700	272500
Դավթաշեն	230700	288200	286400
Աջափնյակ	207300	268700	266700
Մալաթիա-Մեքաստիա	196400	265900	264400
Նուբարաշեն	120500	150300	145500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	234700	294200	291100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. հունվարի համեմատ աճել են 1.1 %-ով:

2008թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2007թ.	փետրվար 2008թ.	հունվար 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	93100	118600	116800
	Ապարան	30500	34400	34100
	Թալին	34600	43900	43400

Արարատ	Արտաշատ	73300	97400	96800
	Մասիս	85100	123400	121200
	Վեդի	56600	80300	78300
	Արարատ	54700	63800	63500
Արմավիր	Վաղարշապատ	115900	157300	153500
	Արմավիր	81800	117000	114000
Գեղարքունիք	Սևան	54500	81400	80200
	Գավառ	33800	44800	44300
	Մարտունի	49400	66900	65600
	Վարդենիս	28700	31700	31400
	Ճամբարակ	16200	19300	19100
Լոռի	Վանաձոր	67300	88100	86900
	Ստեփանավան	35200	49100	47500
	Սպիտակ	45600	63100	61300
	Ալավերդի	25700	30600	30300
	Տաշիր	24400	32700	31700
	Թումանյան	7500	9300	9000
	Շամլուղ	4800	6300	6000
	Ախթալա	12800	15700	15200
Կոտայք	Արուսյան	133900	163800	162200
	Նոր Հաճն	92000	120400	119200
	Բյուրեղավան	64400	92300	90300
	Եղվարդ	84700	111500	111300
	Հրազդան	47500	64900	63900
	Ծաղկաձոր	93200	200200	191200
	Չարենցավան	55100	81400	79300
Շիրակ	Գյումրի	64300	93500	91900
	Արթիկ	43200	55000	52400
	Մարալիկ	26300	29900	29500
Սյունիք	Գորիս	65600	95300	91500
	Կապան	60900	85400	81900
	Սիսիան	50600	67600	64900
	Մեղրի	38100	47900	47500
	Ագարակ	25400	30800	30000
	Դաստակերտ	9000	10100	9900
Վայոց Ձոր	Վայք	57700	74700	73500
	Եղեգնաձոր	67300	95500	94500
	Ջերմուկ	44400	70500	67800
Տավուշ	Դիլիջան	61800	86600	85800
	Իջևան	80800	116200	112000
	Բերդ	35400	39800	39600
	Նոյեմբերյան	28000	35000	34700
	Այրում	19200	22800	22800

2008թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. հունվարի համեմատ աճել են 2.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1863 միավոր /1221.53 հա/ հողեր, որից Երևանում` 138 միավոր /17.27 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 44 միավոր /2.92 հա/ հողեր, որից Երևանում` 27 միավոր /1.66 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 835 միավոր /1088.17 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.50 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 675 միավոր /59.98 հա/, որից Երևանում՝ 80 միավոր /6.34 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 312 միավոր /25.65 հա/, որից Երևանում՝ 50 միավոր /10.41 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 11 միավոր /8.28 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 30 միավոր /39.44 հա/:

2008թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 1716 միավորի /1032.54 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 128 միավոր /16.74 հա/, նվիրատվության գործարքներ՝ 144 միավորի /188.70 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /0.52 հա/ և փոխանակության գործարքներ՝ 3 միավորի /0.29 հա/:

Հանրապետությունում 2008թ. փետրվարին, 2007թ. փետրվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը աճել է 7.2%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 17.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 38.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 284.52 հա, որից 261.90 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.1% կամ 671 գործարքներ /511.28 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 54 գործարքներ /8.11 հա/, իսկ 60.7% կամ 1042 միավորը /518.67 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 74 միավոր /8.63 հա/: 2008թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 3 գործարք /2.60 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.02	17	2.41	36	5.67	7	0.50	0	0.00	54	3.47	13	4.67
Արագածոտն	49	112.98	0	0.00	1	0.06	13	2.54	46	76.10	1	0.13	55	5.34	2	0.09
Արարատ	38	53.48	2	2.30	31	2.94	41	0.99	114	49.91	1	2.00	53	4.54	5	0.70
Արմավիր	16	61.29	0	0.00	0	0.00	10	0.11	86	81.21	0	0.00	65	5.60	4	0.08
Գեղարքունի	6	9.54	0	0.00	40	2.78	20	2.07	3	1.84	0	0.00	22	2.83	3	0.11

Ք																		
Լոռի	0	0.00	1	1.18	21	1.52	53	2.80	140	140.43	1	0.15	13	1.44	4	0.22		
Կոտայք	62	182.14	2	0.66	20	1.85	31	1.98	106	79.76	0	0.00	136	13.34	4	0.16		
Շիրակ	3	0.33	1	1.80	33	1.81	13	0.55	23	22.52	0	0.00	5	0.49	3	0.06		
Սյունիք	2	1.55	0	0.00	1	0.01	13	0.48	8	6.64	0	0.00	5	0.57	5	0.31		
Վայոց Ձոր	16	14.18	0	0.00	6	0.24	13	0.82	12	5.13	0	0.00	5	0.79	0	0.00		
Տավուշ	5	2.09	1	0.04	16	1.33	21	0.98	11	3.30	0	0.00	14	1.03	2	0.01		
Ընդամենը	197	437.58	8	6.00	186	14.95	264	18.99	556	467.34	3	2.28	427	39.44	45	6.41		

Ստորև ներկայացվում է 2008թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	34	2.76	1	0.02	7	0.58	26	2.16	20	5.34	0	0.00	0	0.00	10	1.83	10	3.51
Արագածոտն	2	0.004	0	0.00	0	0.00	2	0.004	61	115.57	49	112.98	0	0.00	1	0.06	11	2.53
Արարատ	6	2.22	1	2.00	0	0.00	5	0.22	106	57.48	38	53.48	1	0.30	31	2.94	36	0.76
Արմավիր	4	0.02	0	0.00	0	0.00	4	0.02	20	61.03	14	60.94	0	0.00	0	0.00	6	0.09
Գեղարքունիք	5	0.58	0	0.00	0	0.00	5	0.58	60	5.81	5	1.54	0	0.00	40	2.78	15	1.49
Լոռի	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	74	5.49	0	0.00	1	1.18	21	1.52	52	2.79
Կոտայք	7	0.12	0	0.00	1	0.04	6	0.08	108	186.51	62	182.14	2	0.66	19	1.81	25	1.90
Շիրակ	7	0.32	0	0.00	3	0.09	4	0.23	43	4.17	3	0.33	1	1.80	30	1.72	9	0.32
Սյունիք	2	0.14	0	0.00	0	0.00	2	0.14	14	1.90	2	1.55	0	0.00	1	0.01	11	0.34
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	35	15.24	16	14.18	0	0.00	6	0.24	13	0.82
Տավուշ	3	0.02	0	0.00	2	0.02	1	0.003	39	4.37	4	2.05	1	0.04	14	1.31	20	0.97
Ընդամենը	71	6.19	2	2.02	13	0.73	56	3.44	580	462.91	193	429.19	6	3.98	173	14.22	208	15.52

Հանրապետությունում 2008թ. փետրվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /8.39 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. փետրվարին 2007թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 8.2%-ով: Ընդ որում Երևանում աճել է 2.2 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 6.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 12.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 35.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 5.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 40.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների
---------------------------------------	--	--

	Միավորների քանակը	Մավերեքը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեքը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	43	87.21	36.0	5500.0	340.4	34	49.79	365.0	12000.0	3065.5
Ապարան	1	0.80	42.5	42.5	42.5	1	0.80	86.5	2727.3	398.8
Թային	5	24.97	34.8	212.6	113.7	9	8.40	93.6	5494.5	431.6
Ծաղկահովիտ								79.5	1000.0	184.6
Արարատի մարզ										
Արտաշատ	23	36.20	85.0	2332.3	519.0	58	16.72	335.1	10833.3	1615.1
Մասիս	6	8.73	44.8	585.7	148.8	18	19.31	200.0	11904.8	2042.8
Վեդի	9	8.55	39.6	622.2	341.6	38	13.88	207.0	10795.1	1424.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	13.68	69.0	106.1	87.5	40	27.38	294.3	9090.0	1035.4
Բաղրամյան	11	46.80	33.8	122.5	43.9	3	3.87	90.6	2561.1	623.8
Վաղարշապատ	1	0.46	521.9	521.9	521.9	42	49.14	444.4	11764.7	1818.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	396.2
Ճամբարակ	3	0.30	605.0	1405.0	1103.3	3	1.84	60.5	953.3	163.5
Մարտունի								51.1	2850.0	485.3
Սևան	1	0.25	880.0	880.0	880.0			52.2	2134.8	207.5
Վարդենիս	1	0.99	460.1	460.1	460.1			41.2	2575.1	271.3
Լոռու մարզ										
Այվերդի						69	42.03	170.4	6424.2	1142.3
Գուգարք								234.6	6065.9	970.2
Սպիտակ								250.0	5555.5	541.1
Ստեփանավան						6	4.34	90.6	1686.6	397.3
Տաշիր						65	94.06	45.3	1384.4	217.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	12.05	49.8	884.9	374.8	47	26.63	279.3	11942.7	3755.8
Եղվարդ	42	164.91	34.8	617.5	249.1	43	35.31	174.4	11971.8	2645.2
Հրազդան	7	5.19	186.3	8060.8	1369.8	12	5.97	130.5	10256.4	1047.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						16	14.13	252.0	1693.1	475.5
Ամասիա								40.9	261.0	120.0
Անի						7	8.39	110.6	546.9	265.5
Աշոցք								58.5	215.8	118.5
Արթիկ	3	0.33	419.8	420.8	420.2			79.4	1428.6	180.8
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2.55	92.6	1023.2	362.2
Կապան	2	1.55	180.0	619.5	399.8			120.0	841.6	236.2
Մեղրի						1	0.51	193.0	3000.0	521.5
Սիսիան						5	3.58	46.3	1977.4	254.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	2.49	42.9	601.2	272.6	3	0.53	125.0	10000.0	1334.2
Վայք	13	11.69	33.7	187.1	85.1	9	4.60	58.8	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.50	361.6	361.6	361.6	3	0.87	213.3	3783.8	378.5
Իջևան	3	1.55	51.8	1851.9	896.4	3	0.57	267.5	9454.5	841.1
Նոյեմբերյան						5	1.86	46.7	7368.4	573.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. փետրվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	590.0	400.6	400.6	400.6	55	53424.0	130.7	22222.2	2465.5
Ապարան								124.1	609.6	206.8
Թային								63.2	1454.8	103.1
Ծաղկահովիտ								100.0	214.3	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	26	27677.0	164.0	415.6	293.6	6	6935.0	173.9	7140.3	918.8
Մասիս	5	1733.0	1516.3	1644.8	1559.2	30	20994.0	187.5	25000.0	1200.7
Վեդի						17	17488.0	126.1	5000.0	668.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	17847.0	131.6	9090.9	1182.4
Բաղրամյան								100.0	833.3	141.0
Վաղարշապատ						49	38175.0	197.4	26528.4	1531.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	2040.0	110.2	110.2	110.2	6	6917.0	186.6	1084.3	370.2
Ճամբարակ						2	3213.0	71.3	2286.2	101.7
Մարտունի	35	18213.0	110.9	116.5	113.6	11	13770.0	119.3	5000.0	262.5
Սևան	4	7500.0	188.1	188.1	188.1	1	1250.0	240.0	3110.4	163.8
Վարդենիս						2	3120.0	72.5	987.2	118.3
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1030.0	114.3	1388.9	137.5
Գուգարք	21	15182.0	111.5	7219.0	3449.5	6	6193.0	77.9	14083.3	576.6
Սյիտակ						3	2590.0	104.9	1348.3	134.4
Ստեփանավան						3	4600.0	88.2	1666.7	112.2
Տաշիր								45.3	400.0	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	12	10350.0	641.0	2325.0	1639.2	55	56014.0	264.5	35353.5	1938.9
Եղվարդ	2	1600.0	1481.3	1643.8	1562.5	71	67353.0	173.6	27000.0	2048.5
Հրազդան	5	6100.0	393.0	617.1	559.7	9	8400.0	117.7	34848.5	1327.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	14	8268.8	277.2	3333.3	1434.0	4	3386.0	113.6	18750.0	330.8
Ամասիա								45.3	274.7	68.5
Անի	2	1828.0	225.0	225.0	225.0			67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	14	7128.0	52.5	1364.3	340.5	1	1500.0	111.8	5000.0	174.6
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2300.0	112.2	1700.0	246.2
Կապան								67.9	2638.9	206.3

Մեղրի	1	135.0	250.0	250.0	250.0	2	1450.0	68.5	632.9	127.3
Միսիան						1	1990.0	123.5	875.0	142.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	2400.0	748.8	757.5	753.1	5	7944.0	96.7	7659.6	307.2
Վայք								120.7	1448.3	121.4
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	86.7
Իջևան	14	13081.0	50.8	1495.0	1165.9	11	7773.0	74.1	14423.1	437.2
Նոյեմբերյան						3	2520.0	125.0	1948.1	140.8

2008թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ 2.35 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Լոռու /0.28 հա/, 1-ը՝ /2.07 հա/ Շիրակի մարզերում:

2008թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 881 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 54.4% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. փետրվարին 2008թ. հունվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 5.4%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ՝ 23.6%-ով:

2008թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 42 բնակարանների, 28 անհատական բնակելի տների, 424 հասարակական, 36 արտադրական նշանակության օբյեկտների, 330 միավոր /593.22 հա/ հողերի, 2 այգետնակների և 19 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 28 վարձակալության գործարքների /այդ թվում 5 միավոր /0.01 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. հունվարի համեմատ նվազել է 40.4%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ աճել՝ 86.7%-ով:

2008թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 593.22 հա հողերից 7.94 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 585.28 հա հողերի 28.07 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 211.05 հա, որից 143.09 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 269.90 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. փետրվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	28	42.17

Արարատ	0	0.00	4	50.90
Արմավիր	0	0.00	2	0.54
Գեղարքունիք	4	129.60	15	13.49
Լոռի	2	140.00	5	8.29
Կոտայք	1	0.30	3	24.20
Շիրակ	0	0.00	22	47.36
Սյունիք	0	0.00	1	1.50
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	1	0.40
Ընդամենը	7	269.90	81	188.85

2008թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2063 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. հունվարի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2007թ. փետրվարի համեմատ՝ 44.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.0%/, առանձնատների /28.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /7.4%/ և հողերի /15.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 715 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. հունվարի համեմատ աճել է 98.6%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ՝ 24.6%-ով:

2008թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 341.48 հա հողեր, որից 5.04 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 96.5% կամ 329.55 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 161.52 հա, որից 160.66 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 224 գործարքներ, որից 142-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 62.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 32.1%-ն՝ անհատական բնակելի տների, 3.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.5%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.3%-ը՝ ավտոտնակների և 0.5%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 1.9 անգամ, ընդ որում Երևանում աճել է 2.4 անգամ, իսկ մարզերում՝ 1.4 անգամ:

2008թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 6 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2008թ. հունվարի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 9.1%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ աճել՝ 66.7%-ով: 2008թ. փետրվարին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 3-ը՝ Երևանում, 2-ական՝ Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի, 1-ը՝ Արարատի մարզերում:

2008թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2099 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. հունվարի համեմատ աճել է 50.9%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ՝ 53.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.0%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն